ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

<<ՇԻՐԱԿԻ Մ.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ>> ՀԻՄՆԱԴՐԱՄ
ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ
ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

## ԹԵՄԱ՝ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Դասվար՝ ........................Պողոսյան Գոհար Կարլենի

Ղեկավար՝ .......................Շ. Սարգսյան /մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ/

Գյումրի-2023

# ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Թեմայի անվանումը՝

Հայերեն՝ «Բարոյական դաստիարակության ուղիները տարրական դպրոցում»

Բարոյականությունը, որպեսբարոյականդաստիարակությանգիտատեսականհիմք, հանդիսանումէհասարակականգիտակցությանձևնավելիինչնէ, քանհասարակականգիտակցությանմյուսձևերը: Բարոյական դաստիարակությանը դաստիարակության ողջ համակարգում հնագույններից է: Ըստէության, երբխնդիրառաջացավդաստիարակելմատաղսերնդին, այդժամանակիցէլբարոյականդաստիարակությունըդարձավիրատապևառաջնային:Պատահականչէոր,բազմաթիվգիտագեղարվեստականաշխատանքներում,հաճախ, «դաստիարակություն» հասկացությանփոխարենօգտագործելեն «բարոյականդաստիարակությունը» , որիհամակարգումէլընկալվելենդաստիարակությանբազմաթիվայլբոլորովինվերջերս առանձնացվածխնդիրներ:

Անձնավորության բարոյական դաստիարակության բարդ պրոցեսում տարբերմեթոդներ, կատարելով միանգամայն որաշակի դերեր, ընդհանուր խնդիրներ են լուծում: Այս կամ այն մեթոդն օգտագործելով դաստրիակները պետք է ճիշտ իմանան, թե բարոյական որակի գոյացման համար հատկապես ինչի՞կարելի է հասնել այդ մեթոդի շնորհիվ:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……………………………………………………………………………..4

*Գլուխ 1*

**ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԻ ՀԱՐՑԸ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՄԵՋ……..........6**

1.1 Դաստիարակությունը որպես կազմակերպված նպատակային գործընթաց……….6

1.2 Դաստիարակության տեսակները ըստ բովանդակության…………………………..11

*Գլուխ 2*

**ԲԱՐՈՅԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԻ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ……......23**

2.1 Բարոյական դաստիարակության էությունն և բովանդակությունը………………...23

2.2 Բարոյական դաստիարակության ուղիները ուձները……………………….…….28

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ……………………………………………………………………39

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ…………………………………….…..41

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը:

Բարոյական դաստիարակությունը սերտորեն կապված է դաստիարակության մյուս բաղադրամասերի հետ և մեծ դեր է խաղում անձի համակողմանի և ներդաշնակ զարգացման համար: Բարոյական դաստիարակությունը հասարակական գիտակցության այն ոլորտներից է, որը կյանքի բոլոր բնագավառներում մարդկանց վարքը կարգավորելու գործունեություն է կատարում:

Արդի ժամանակաշրջանում շատ քննարկվող է կրտսեր դպրոցականի բարոյական դաստիարակության հարցը այս պայմաններում առավել քան այն կարևորվում էքանի որ կրտսեր դպրոցական տարիքում է դրվում բարոյական վարքի հիմքը, յուրացվում բարոյական նորմաները և վարքի կանոնները և այս տարիքում է սկսում ձևավորվել անձնավորության հասարակական ուղղվածությունը: Բարոյական դաստիարակության իրականացման արդյունավետ ուղիները տարրական դպրոցում թեմայի արդիականությունը պայմանավորված է՝ բարոյական դաստիարակության իրականացման գործընթացում առկա որոշ հիմնախնդիրներիուսումնասիրման անհրաժեշտությամբ, որը տարրական դպրոցում առավել կարևոր և հրատապ նշանակություն է ստանում:

Բարոյական դաստիարակությունը ուղղված է նաև դպրոցականի մոտ ուսուցչի նկատմամբ հարգալից վերաբերմունքի, սիրով, ինչպես նաև ավանդույթների հարգմանը և պահպանմանը: Այս բոլորը երեխայի մոտ պետք է ձևավորել կրտսեր դպրոցական տարիքում: Կրտսեր դպրոցականի բարոյական դաստիարակությունը մեծապես կախված է նաև ուսուցչի և ծնողի համագործակցությունից, որն այսօր արդիական է և անհրաժեշտ, քանի որ երեխայի բարոյական դաստիարակությունը պայմանավորված է միմյանց նկատմամբ երկկողմանի վերաբերմունքի բնույթով, որի հիմքում պետք է լինեն վստահության, փոխադարձ հարգանքի, փոխօգնության, օժանդակության, համբերատարության և հանդուրժողականության սկզբունքները:

Ավարտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել բարոյական դաստիարակությունը արդի տարրական դպրոցում և բացահայտել այդ գործընթացի իրականացման արդյունավետ ուղիները:

Ավարտական աշխատանքի նպատակի իրականացման համար առաջացած խնդիրներն են՝

- Ուսումնասիրել բարոյական դաստիարակության էությունը տարրական դպրոցում:
- ՌԻսումնասիրել և բացահայտել բարոյական դաստիարակության իրականացման արդյունավետ մանկավարժական պայմանները և ուղիները տարրական դպրոցում:
- Սոցիոլոգիական հարցումների  անցկացում,արդյունքների վերլուծություն:
- ՌԻսումնասիրել դաստիարակության նպատակի հարցը մանկավարժության մեջ:

Ավարտական աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքը ներկայացված է 47 էջ համակարգչային շարվածքով:

# Գլուխ 1

## Դաստիարակության նպատակի հարցը մանկավարժության մեջ:

### 1.1 Դաստիարակությունը որպես կազմակերպված նպատակային գործընթաց:

Դաստիարակության նպատակի հարցը արծարածվել է դեռևս հնագույն մանկավարժական հուշարձաններում, նույնիսկ առանձին ասույթներում և ասացվածքներում: Այլ կերպ լինել չէր էլ կարող: Դաստիարակությունը ծագեց որպես հասարակության պահանջ, որպես հասարակական մարդու պահանջմունքներ բավարարելու գիտակցական գործունեություն:Գիտակից մարդը, ապրելու գոյապայքարում բախվելով բնության հետ, ստեղծելով և ծավալելով հասարակական հարաբերություններ, ինչ-որ ձևով նախագծում էր այդ հարաբերությունները և բնականաբար ինքն իրեն: Մարդը ոչ միայն փոխում էր բնությունը, այլև ինքն իրեն: Մարդն ինքն իր ստեղծագործությունն է՝ ի տարբերություն բոլոր մյուս կենդանիների: Փորձելով կատարելագործել ինքն իրեն և իր սերունդներին՝ նա անխուսափելիորեն կանգնում էր դաստիարակության դժվարին գործունեությունն իմաստավորելու անհրաժեշտության առաջ: Ինչո՞ւ երեխաներին սովորեցնենք ձուկ որսալ,կրակ վառել, պատերազմել կամ քարե կացին պատրաստել: Այս հարցերն ուղղված էին դաստիարակության անհրաժեշտությունն ու նպատակը պարզելուն, որը հնարավորություն էր տալիս հնագույն մարդուն՝երեխաների դաստիարակությունը դարձել արդյունավետ: Դաստիարակության՝ ի սկզբանե հստակ բնական և անժխտելի օրինաչափությունն այս է, դաստիարակության նպատակը բխում է կյանքի պահանջից: Ճիշտ դաստիարակել նշանակում է ճիշտ հասկանալ կյանքի պահանջը: Միաժամանակ, ինչքան էլ առեղծվածային թվա, պետական համակարգերի առաջացումը, հասրակության դասակարգերի շերտաորումը և հակամարտ անհաշտելի շահերի երևան գալը ստեղծեց լուրջ խճճվածություն դաստիարակության նպատակի որոշման հարցում: Պետությունը, տիրապետելով իշխանության լծակներին, այսուհետև մշտապես պետք է հոգ տաներ, որ աճող սերնդի դաստիարակությունը ծառայի տվյալ քաղաքական և տնտեսական համակարգի ամրապնդմանը: Այսինքն՝ դաստիարակության նպատակի ոլորտում ծագեց մի նոր գործոն՝քաղաքական գործոն, որն ամրապնդվեց գաղափարախոսությամբ: Եթե նախնադարյան մարդու համար պարզ է, որ ցեղի, տոհմի անդամներին ինչքան ուժեղ

և խելացի լինեին, ցեղն այնքան ուժեղ ու ապահով կլինի, ապա ստրկատիրական պետության մեջ դա բոլորովին էլ այդպես չէր գիտակցվում: <<Ստրուկը խոսող գործիք է,>>, _ ասում էր Արիստոտելը: Նշանակում է՝ նրան պետք է դաստիարակել միայն օգտագործելու համար, իսկ տերերին՝ վայելելու համար: Դրանով բախվեցին հակամարտ միտումներ, մտածողության և աշխարհայացքի երկու հակամարտ դրսևորումներ:

Առաջին՝ մարդը՝ բնության ազատ զավակը և նրա գլուխգործոցը, կարող է և իրավունք ունի կատարելագործվելու, զարգանալու և իր կյանքն ավելի լավ դարձնելու:

Երկրորդ՝ մարդը, որ իշխանություն ունի, կարող է և պետք է ստրկացնի ուրիշ մարդկանց և նրանց աշխատանքի հաշվին կառուցի իր հզորությունն ու բարեկեցությունը, որը նույնպես հասարակության զարգացման օբյեկտիվ պահանջն էր արտահայտում:

Դաստիարակության նպատակների յուրահատուկ սոցիալ-մանկավարժական տեսակետ առաջարկեց Ջոն Լոկը: Ջենթլմենի դաստիարակության նպատակը նա հանգեցրեց մտավոր, ֆիզիկական և բարոյական դաստիարակությանը, միաժամանակ հիմնավորեց այդ խնդիրների իրականացման մանկավարժական ուղիներն ու նպատակները:[1]

XX դարի սկզբներին դաստիարակության նպատակի և խնդիրների ոլորտում սրվեց քաղաքական և գաղափարական հակամարտությունը:

Մաքսիստական մանկավարժությունը, ելնելով խորհրդային երկրում կատարվող ծավալուն հասարակական վերափոխումների պահանջից, հիմնավորումն էր հասարակական վերափոխումների օբյեկտիվ պատմական միտումների խթանման և կառավարման անհրաժեշտությունը՝ պահանջելով հասարակության բոլոր անդամների համար ապահովել հավասար և լիարժեք կրթության հնարավորություն: Բոլորին միատեսակ կրթություն և դաստիարակություն տալու, այսպես կոչված, էգալիտար (հավասարապաշտ) համակարգն իրականացվում էր նախկին ԽՍՀՄ-ում և Ճապոնիայում:

Էգալիտար դաստիարակության կողմնակիցները հնարավոր էին համարում

---

[1]Ղուլումյան Գ. Ե., Մանկավարժություն Երկու գրքով , Գիրք I: Երևան 2005

յուրաքանչյուր երեխայի ապահովել բարձրորակ կրթությամբ՝ հաշվի առնելով նրանց բոլոր առանձնահատկությունները: Ըստ էգալիտար տեսության՝ բոլոր երեխաներն էլ օժտված են և կարող են հասարակական պահանջին համապատասխան կրթություն ստանալ: Չնայած էգալիտար համակարգի հաջողություններին, հատկապես հասարակական-տնտեսական և ռազմական պոտենցիալի հզորացման տեսանկյունից, իրենց զգացնել էին տալիս անհատի զարգացման և նրա պահանջմունքների հաշվառման դժվարությունները:

Վաղուց հաստատվել է, որ մարդն իր կյանքի ընթացքում փոխվում է: Ամենախոր փոփոխությունները տեղի են ունենում մանկության, դեռահասության և հոգևոր հատկությունները զարգանում են ինտենսիվ կերպով:

Մարդու զարգացումը օրինաչափ պրոցես է, որ կատարվում է նրա անձի համար նշանակալի բոլոր ոլորտներում՝

- գործունեության մեջ,
- աշխարհի արտացոլման գիտակցության մեջ,
- շրջապատի աշխարհի, մարդկանց հետ ունեցած հարաբերությունների մեջ:

Մանուկների և դեռահասների զարգացումը ներառնում է նաև աճման պրոցեսները, որ դիտվում է որպես վերջին հաշվով օրգանիզմի ֆիզիկական հասունությանը հասցնող ֆիզիկական ու ֆիզիոլոգիական պրոցեսների օրինաչափ ընթացք:

Դաստիարակությունը, ինչպես ցույց է տրված վերը, դաստիարակների նպատակաուղղված ներգործությունն է երեխաների ու երիտասարդության գիտակցության ու վարքի, նրանց աշխարհայացքի, հայացքների, արարքների, սովորույթների վրա: Դաստիարակությամբ էլ հենց նշանակելի չափով պայմանավորվում են այն փոփոխությունները, որ կրում է մարդը ծնվելու պահից մինչև հասուն դառնալը:

Մարդու՝ որպես սոցիալական էակի լինելիությունը,նրա կատարելագործումը կյանքի ընթացքում, որ տեղի է ունենում զարգացման և դաստիարակության հետևանքով, կոչվում է ձևավորման պրոցես:

Մարդը կենդանի էակ է՝նրան հատուկ կենսաբանական կազմակերպվածությամբ, ուստի բնական է, որ բնության օրենքները տարածվում են նաև նրա զարգացման վրա:

Սակայն այդ օրենքները մարդու նկատմամբ գործում են այլ կերպ, քան կենդանական աշխարհում:Դաստիարակությունը լայն ընդգրկում ունեցող

հասարարակական  երևույթ է: Նրա էության բացահայտումը մարդաբանական և հասարակական երևույթներն ուսումնասիրող գիտությունների ընդհանուր խնդիրն է:Դաստիարակությունը լայն իմաստով, որպես մանկավարժական հասկացություն, ընդգրկում է ուսուցումն ու կրթությունը: Ինչպես ուսուցման, այնպես էլ դաստիարակության գործընթացը նպատակադրված բովանդակության իրականացման համար ստանում է որոշակի ձևեր: Տարրական դպրոցում այն կապված է դասերի ժամանակ իրականացվող աշխատանքի հետ, սակայն գոյություն ունեն արտաժամյա և արտադասարանական աշխատանքի հատուկ ձևեր՝ դաստիրակչական գործեր:[2]

Դաստիարակչական գործերի հիմքում ընկած է երկու մոտեցումներ՝գործնական և կոմպլոքս: Գործնականն  պահանջում  է դպրոցականների գործունեության տարբեր ձևերի՝ ճանաչողական, աշխատանքային, հասարակական, գեղագիտական, սպորտային, արժեքային և ազատ շփման կազմակերպում, երկրորդը՝ գործունեության բոլոր ձևերի օրգանական սերտաճումն է, դրա բարոյական աշխատանքային ինտելեկտուալ ասպարեզում:

Գերակշռող դաստիարակչական նպատակը որոշում է կոնկրետ գործերի խնդիրները, այսինքն հիմնական գաղափարի, որը համընկնում է դաստիարակության ընդհանուր ուղղություննորից մեկի հետ: Դաստիարակչական գործերի խնդիրների հիմնավորումը  դրա արդյունավետության անհրաժոշտ պայման է: Դրանք պետք է մեկնաբանվեն և մատուցվեն աշակերտներին:

Դաստիարակության գործընթացը ապահովում է մանկավարժական գործընթացի բոլոր հիմնական հատկանիշները:

- Դաստիարակությունը նպատակաուղղված պլանավորված, հատուկ արվեստով իրականացվող պրոֆեսիոնալ գործունեությունն է, որն իրականացվում է հատուկ հիմնարկներում և հասարակական ինսիտուտներում:
- Դաստիարակությունը կազմակերպված բնույթ է հաղորդում անձնավուրության սոցիալիզացիայի գործընթացին, հասարակական հրատապ պահանջներին և մարդու զարգացման օրինաչափություններին

[2]ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ: Դասախոսությունների դասընթաց: <<ԼՈՒՅՍ>> Հրատարակչություն Երևան 1969

համապատասխան արագացնում է անձնավորության զարգացումը, ձևավորումը և հասունացումը:

- Դաստիարակությունը երկկողմանի գործընթաց է, իրականցվում է դաստիրակի և սանի անմիջական համագործակցության դիալոկտիկական փոխներգործության ընթացքում:[3]

Դրական որակները զարգացնում է աշխատանքը. Ինչքան այն շատ է, ինչքան այն նպատակաուղղված է, այնքան ավելի բարձր է անհատի զարգացման և սոցալիզացման մակարդակը: Դրա համար էլ դաստիարակվողներին անհրաժեշտ է ընդգրկել տարբեր օգտակար գործերի մեջ, ձևավորելով դրական վերաբերմունք նրանց հանդեպ: Մասնակցելով իրագործողի աշխատանքին որպես լիիրավ անդամ, նրանք ձեռք են բերում բարոյական վարքի փորձ ,զարգանում են ֆիզիկապես և հոգեպես, պարզաբանում են աշխատանքի շարժառիթները, կատարելագործում են իրենց բարոյական որակները:

Կյանքի դպրոցը դաստիարակության լավագույն դպրոցն է: Այս սկզբունքը դաստիարակներից պահանջում է ակտիվ գործունեություն որկու ուղղություններով՝

1. դաստիարակվողներին լայնամաշտաբ և օպերատիվ կերպով ծանոթացնել մարդկանց հասարակական և աշխատանքային կյանքի, այնտեղ տեղի ունեցող փոփոխությունների հետ

2. դաստիարակվողների ներգրավեւմ իրական հարաբերությունների, հասարակական օգտավետ գործունեության տարբեր տեսակների մեջ:

---

[3] ՂույումչյանԳ. Ե., Մանկավարժություն Երկու գրքով , Գիրք II: Երևան 2005

## 1.2Դաստիարակության տեսակները ըստ բովանդակության

Անձնավորություն դառնալու համար յուրաքանչյուր անհատ պետք է զարգանա մտավոր, ֆիզիկական, բարոյական, գեղագիտական և այլ բաղադրամասերով: Դրանք պայմանականորենառանձնացվում են, սակայն գտնվում են փողկապակց-վածության մեջ, քանի որ իրականում մի համալիր են կազմում: Օրինակ՝ էկոլոգիական զարգացումը ենթադրում է, որ արդեն կա մտավորզարգացվածության բարձր մակարդակ, իսկ լավ աշխատունակությունը ենթադրում է ֆիզիկական առողջության առկայություն: Ըստ երևույթին, ֆիզիկական առողջությունը, որը նաև զարգացնող դաստիրակության արդյունք է, մեծապես նպաստում է գեղագիտական, մտավոր ու բարոյական զարգացմանը, ինչպես նաև աշխատասիրության ձևավորմանը:

Այսպիսով՝ ըստ դաստիարակության բովանդակության առանձնացվում են դաստիարակության հետևյալ տեսակները.

- մտավոր
- ֆիզիկական
- բարոյական
- աշխատանքային
- գեղագիտական
- էկոլոգիական
- հայրենասիրական
- և այլն

Մտավոր դաստիարակությունն ուղված է անձի ինտելեկտի, ճանաչողական հնարավորությունների հակումների և շնորհների զարգացմանը: Նրա գլխավոր խնդիրն է զինել սովորողներին գիտական հիմքերի մասին գիտելիքների համակարգով: Մտավոր դաստիարակության կոնկրետ խնդիրներն են՝

- գիտական գիտելիքների որոշակի ծավալի յուրացում
- մտահորիզոնի ձևավորում
- մտավոր ուժերի, ունակությունների և շնորհների զարգացում
- ճանաչողական հետաքրքրություններ զարգացում
- անձի պոտենցյալ հնարավորությունների զարգացում
- ճանաչողական ակտիվության ձևավորում

- սեփական գիտելիքները մշտապես լրացնելու, ընդհանուր և հատուկ պատրաստվածության մակարդակը բարձրացնելու պահանջմունքի զարգացումը
- սովորողնորի ճանաչողական գործունեության մեթոդներով զինում:

Արիստոտելը կարծում էր, որ գոյություն ունի մարդու հոգու երեք ձև՝ բուսական, կենդանական և բանական: Առաջինը դրսևորվում է սնվելով և բազմանալով, երկրորդը նաև զգայություններով և ցանկություններով, իսկ ահա երրորդը՝ մտածողությամբ և իմացությամբ: Այս ամենը վկայություն է այն բանի, որ Հին աշխարհի մեծագույն իմաստունը գիտեր դաստիարակության անհրաժեշտութան մասին:

Տարրական դասարաններում երեխաների մտավոր զարգածվածությունն ապահովելու համար մանկավարժը և ծնողը պետք է որոշակի պատկերացում ունենան այն չափորոշիչների մասին,որոնք վկայում են մտավոր զարգացման ոլորտում կատարած դրական տեղաշարժերը: Դրանցից է շրջապատող աշխարհի երևույթների նկատմամբ սովորողի ցուցաբերած ակտիվ վերաբերմունքը: Դա դրսևորվում է նուրբ դիտողականությամբ,գիտելիքները հարստացնելու և ստեղծագործարար կիրառելու ձևերով:Կարևոր է նաև գիտելիքների համակարգվածությունը,այսինքն այն որ դրանք փոխկապակցվածության մեջ են գտնվում, ինչպես և այն, որ սովորողը ճիշտ է կազմակերպում իր մտավոր աշխատանքը, ընտրում է դրա իրականացման առավել խնայողական և արդյունավետ եղանակները:

Մտավոր զարգացման չափորոշիչներից է նաև մտքի ինքնուրությունը: Բազմիմաստությունը գիտելիք չի տալիս, եթե անձը գերի է մնում կարդացածին ու լսածին: Ինքնուրության բարձրագույն աստիճանը ստեղծագործական մտածողությունն:[4]

Մտավորդաստիարակությունննանձնավուրությանզարգացմանամենակարևորկողմնէ: Մարդուամենաբնորոշհատկանիշներնգիտակցություննուինքնագիտակցություննեն: Առանցմտավորզարգացմաննդաստիրակությանմարդըմիայնբանականկենդանիէ:

[4]Մանուկյան Ս.Պ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ: /Ուցումական ձեռնարկ: Երկրորդ բարեփոխված հրատարակություն: << Զանգակ- 97 >>, 2005

Գիտակցությունննուինքնագիտակցություննանմիջականորենկապվածենմարդուհասա րակականէությանհետ, որնանհնարինէառանցմարդումտավորզարգացման: Մտավորզարգացմանկարևորագույնխնդիրներիցէնաևանձնավորությանըմարդկային մշակույթին, մարդկությանկողմիցկուտակածգիտելիքներինուփորձինծանոթացնելնէ: Մտավորդաստիարակությաննարագացնումէանհատիհասարակականզարգացմանգ ործընթացը, հնարավորէներգրավելհասարակականկյանքիննարտադրությանգործընթացին: Մտավորդաստիարակությանկարևորխնդիրըանձնավորությանաշխարհայացքիձևավ որումնէ:
Գիտակցությունըհնարավորությունէտալիսմարդունմտովիառաջանցնելտեսնելիրկա տարածգործեղությանավարտնուհետևանքը:
Աշխարհայացքըգիտելիքներիայնհամակարգնէ, որըկողմնորոշումէանձինիրգործունեությանմեջնինքնավստահությունէհաղորդումնր ան: Առանցկայունհայացքի՝ մարդըզուրկէինքնավստահությունից:
Մարդըծնվումէխելացի, գիտունդառնալուընդունակությամբ, սակայնառանցհամապատասխանգործունեությանայդունակություններըկմարենանհ ատիմեջ:
Հոգեբանականհետազոտություններըցույցենտալիս, որմտավորզարգացմանսենզիտիվտարիքըմանկություննէ՝ հետևաբարմտավուրզարգացմանամենակարևորխնդիրներըլուծվումենայստարիքում, հատկապեստարրականդասարաններում:
Տարրականդասարաններիցէսկսվումերեխաններիուսումնառությունը:
Մտավորդաստիարակությանկարևորխնդիրէնաևմտածելսովորեցնելը:
Մտածողությունըբնական-պատմականզարգացմանարդյունքէ:
Մարդումիտքըզարգացածէայնդեպքում, երբձեռքէբերումհետևյալդրականորակները. բազմակողմանիություն, ճկունությունխորությունևայլն:[5]
Մտավորդաստիարակությանկարևորխնդիրէնաևսովորելսովորեցնելը:
Սովորելսովորեցնելնշանակումէաշակերտիմեջդաստիրակելսովորելուցանկությունև պահանջմունք,

[5]Ղույումչյան Գ. Ե. , Մանկավարժություն :Դասագիրք բուերի համար: Երևան , Զանգակ-97 , 2005 թ. 357-362 էջ

այլգիտելիքներձեռքբերելուուղիներիններդանակներինտիրապետելուպահանջմունքիձ նավորմանը, որըուսումնականգործունեության լիարժեքծավալմանդեպքումվերածվումէմտավորդաստիարակությանկարևոր միջոցի:

Ֆիզիկական դաստիարակության առաջին ծիլերը նկատվում էին մարդու վաղ աշխատանքային և ռազմական գործողությունների մեջ: ՈՒղեկցելով մեծերին որսի, բերքահավաքի կամ պաշտպանականգործողությունների ժամանակ՝ երեխաները կրկնում էին մեծերի շարժողական գործողությունները, իսկ հետագայում հատուկ խաղերի ձևով վարժվում էին սպավող գործունեությունը՝ կրկնելով դրանց առանձին տարրերը: Հետագա դարաշրջաններում, հասարակական զարգացման համապատասխան, ֆիզիկական դաստիարակությունը վերածվում է հասարակայնորեն պայմանավորված մանկավարժական համակարգի, որի նպատակն էր աճող սերնդին փոխանցել ֆիզիկական կուլտուրայի արժեքները, որով այն ձեռք բերեց սոցիալական կարևոր նշանակություն՝ առավել արդյունավետ դարձրեց մարդու զարգացումն ու հասարակական առաջընթացը:[6]

Հասարակությանտնտեսականնքաղաքականկառուցվածքիփոփոխմանհետփոխվում եննաևֆիզիկականդաստիարակությանխնդիրներըուբովանդակությունը:

Դասակարգային-անտագոնիստականհասարակությանմեջֆիզիկականդաստիրակությունըմշտապեսօ գտագործվելէիշխողդասակարգերիկողմից՝ նվաճողական, քաղաքականկամտնտեսականնպատակներով:

Ֆիզիկականդաստիարակությունըդաստիարակությանմյուսկողմերիհետմիասինկլուծ ումենյուրահատուկխնդիրներ:

Ֆիզիկական դաստիարակությունը ճիշտ դաստիարակության անբաժանելի բաղադրիչ մասն է: Նրա խնդիրներն են՝

- Առողջության ամրապնդումը, ճիշտ ֆիզիկական զարգացում.
- Մտավոր և ֆիզիկական աշխատունակության բարձրացումը.
- Բնական շարժողական որակների զարգացում ու կատարելագործումը.
- Շարժումների ճիշտ տեսակների ուսուցումը.

[6]Ամիրջանյան Յու. Ա., Սահակյան Ա. Ս., Մանկավարժություն, Երևան, 2005 էջ 333-386 էջ

- Հիմնական շաժողական որակների զարգացումը. (ուժ, ճարպիկություն, դիմացկունություն)
- Հիգենիկ հմտությունների ձևավորում.
- Բարոյական որակների դաստիրակումը.

- Ֆիզկուլտուրայով և սպորտով մշտապես և համակարգված պարապելու պահանջմունքի ձևավորումով.
- Առողջ, կայտառ, լինելու, սեփական անձին և շրջապատողներին ուրախություն պատճառելու ձգտման ձևավորում:

Տարրական դպրոցում պետք է կարողանալ սովորողների գիտակցությանն հասցնել առողջության նշանակությունը, որի մասին Շեքսպիրն ասել է, թե դա թանկ է ոսկուց:

Հասկանալի է, որ առողջության ստեղծմանը պահպանմանն ու ամրապնդմանը նպաստում է ֆիզկուլտուրան:

Ֆիզիկական դաստիարակության գերխնդիրը ամեն օր մարմնամարզությամբ զբաղվելու սովորության ձևավորումն է՝զանազան տիպի ֆիզիկական վարժություններ կատարելով:

Դպրոցում Ֆիզիկական դաստիարակությունը հիմնականում իրականացվում է հատուկ դասերով և արտադասարանական զանազան աշխատանքներով՝ խմբակներ, մրցումներ և այլն: Սակայն այսօրվա դրությամբ աշակերտության զգալի մասը չի սիրում ֆիզկուլտուրային և դրանք անց են կացվում ոչ անհրաժեշտ մակարդակով: Դպրոցի շրջանավարտների մեջ շատ են թուլակազմները:

Քանի որ մարդու ողջ գործունեության արդյունավետությունը և նրա կյանքի երջանկությունը հիմնականում պայմանավորված նրա առողջությամբ, ուրեմն անհրաժեշտ է հոգ տանել ֆիզիկական դաստիակության մասին:[7]

Առողջությունըմարդուբոլորուժերիինընդունակություններիզարգացմանուարտահայտմանհիմնքնունախադրյալնէ:

Դպրոցականտարիքումօրգանիզմիաճնունորմալզարգացումըորոշչափովհանդիսանումէերեխաներիմտավոր, հուզականնկամայինզարգացմանկարգավորիչը: Եվայն,

[7]Մանուկյան Ս.Պ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ: /ՈՒցումական ձեռնարկ: Երկրորդ բարեփոխված հրատարակություն: << Զանգակ- 97 >>, 2005

որառողջությանամրապնդմանխնդիրըերեխաներիֆիզիկականդաստիարակությանմե ջհամարվումէառաձնահերթ՝ բացատրվումէհենցայստարիքումօրգանիզմիվրաֆիզիկականվարժություններիունեց ածազդեցությանմեծարդյունավետությամբ: Մանկություններիտաարդությանտարիներինձեռքբեռքբերածովապահովվումէմիջինտ արիքինտարիքավորմարդուժերիպահպանումը: Չպետքէմոռանալայնմասին, որհամարյաբոլորսովորողներինապագակյանքումվիճակվելուէծնողներդառնալն, բարոյականպատասղանատվությունկրելառողջերեխաներդաստիրակելուհամար: Միմայրիհարցրելէբժշկին, թեերբվանի՞ցէլավսկսելիրերեխայիֆիզիկականդաստիրակությամբզբաղվել: Բժիշկըպատասղանելէ. <<Երեխայի ծնվելուց 20 տարի առաջ>>:

Ֆիզիկական դաստիարակության դասերին սովորողները ձեռք են բերում նաև որոշ մասնագիտական գիտելիքներ: Այդ գիտելիքների աղբյուրը հանդիսանում են ոչմիայն ուսուցչի բանավոր բացատրություններն ու նրա ցուցադրած վարժությունները, այլն հենց իր՝ աշակերտի շարժողական գործունեությունը: Ֆիզիկական դաստիարակության պրոցեսում ուսուցիչը աշակերտներին ծանոթացնում է ֆիզիկական վարժությունների կատարման եղանակների հետ, բացատրում է, թե ինչու է դրանք պետք կատարել այդպես և ոչ թե այլ կերպ, պարզաբանվում էուսումնասիրվող, գործողության էությունը և օրգանիզմի վրա ունեցածնրա ներգործությունը:

Աշխատանքային դաստիրակությունը ապահովվում է դպրոցի ողջ ուսումնա-դաստիրակչական աշխատանքով, երեխաներին աշխատանքի զանազան ձևերի մեջ ներգրավելով: Սովորողների աշխատանքային գործունեության հիմնական տեսակները հանդիսանում են ինքնասպասարկումը, տարբեր տիպի հանրօգուտ աշխատանքն ու արտադրողական աշխատանքը: Ինքնասպասարկումը իրենից ներկայացնում է դպրոցականների հանրօգուտ աշխատանքի տարատեսակը: Այն աշխատանքային դաստիարակության անհրաժեշտ օղակ է:

Ինքնասպասարկման աշխատանքի բովանդակության մեջ մտնում են իր նկատմանբ, հագուստի, իրերի, բնակարանի հիգենիկ խնամքը, ինչպես նաև ուսելիքի պատրաստումը, առօրյա օգտագործման իրերի նորոգումն ու մաքրելը, ընտանիքին օգնելը՝ փոքրիկներին խնամելու գործում: Դպրոցի պայմաններում

ինքնասպասարկումը ուղղված է կոլեկտիվի կարիքները բավարարելուն՝ շենքի մաքրում, զննական պարագաների, գրադարանայինգրքերի, կահույքի և մանր գույքի նորոգում և այլն:[8]

Դպրոցում իրականացվում է մտավոր և ֆիզիկական աշխատանք: Բոլոր դասերը նպաստում են աշխատանքային դաստիարակության նաև այն իմաստով, որ սովորողները զբաղված են լինում մտավոր գործունեությամբ: Դրանից բացի դասերի ժամերին երեխաները ծանոթանում են աշխատանքի ծագման ու զարգացման պատմությանը, տարբեր պատմական ժամանակաշրջաններում կիրառվող աշխատանքի տեսակներին:

Դժբախտաբար այսօր դպրոցականների մի զգալի մասը դասերին պարապության է մատնվում, որը վտանգվում է այն իմաստով, որ ձևավորվում է վարժված պարապությունը:

Աշխատանքի ուսուցման դասերը մեծապես նպատում են աշխատանքային դաստիարակությանը, որի ընթացքում սովորողները կատարում են զանազան ֆիզիկական աշխատանքներ արհեստանոցներում կամ դպրոցամերձ հողամասերում: Աշխատանքային դաստիրակությունը սերտորեն կապված է աշակերտների բարոյական, ֆիզիկական, էկոլոգիական, գեղագիտական դաստիարակության հետ:

Դաստիարակության այս տեսակը մեր դպրոցում պատմության ընթացքում բազմաթիվ փոփոխությունների է ենթարկվել:

Աշխատանքի ընթացքում և նրա միջոցով է մարդը կոփվում՝ ձեռք բերելով բարոյական բարձր հատկանիշներ:

Աշխատանքային դաստիարակության նպատակները բազմազան են, նշենք դրանցից մի քանիսը՝

- Յուրաքանչյուր պատանու աղջնակի երիտասարդի մեջ սեր ներարկել դեպի աշխատանքը
- Սովորողների մեջ ձևավորել մարդկային վերաբերմունք աշխատանքի նկատմամբ
- Դաստիարակության ընդհանուր համակարգի հետ միասին ապահովել աճող սերնդի համակողմանի և ներդաշնակ զարգացումը

[8]ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ: Դասախոսությունների դասընթաց: <<ԼՈՒՅՍ>> Հրատարակչություն Երևան 1969

- Սովորողներին ընտելացնել աշխատանքային և գիտակցական կարգապահությանը և այդ միջոցով նրանց մեջ մշակել բարոյական բարձր որակներպատանիների, երիտասարդների մեջ ներարկել սեր ու հարգանք աշխատող, աշղատանքը գնահատող, մարդկաց նկատմամբ:

Այս նպատակների իրագործման համար պետք է լուծվեն մի շարք խնդիրներ: Այդ խնդիրներից ամենակարևորներն են՝

- Դպրոցականներիմեջձևավորելիրենցընդհանուրիհամարաշխատելումշտակ անպահանջմունք. Այսխնդիրըլուծելիս,առաջինհերթին, հարկավորէնրանցմասնակիցդարձնելբազմազանաշխատանքների՝ դաստրիակելովնրանցաշխատանքայինզգացմունքները: Միայնդրանքկիհաղթահարենդեպիաշխատանքըտանողձանապարհինկանգնած ուղիներըուխոչընդոտները:
- Աշխատանքիընթացքումիրարզուգակցելսովորողներիմտավորևֆիզիկականձև երը:
- Աշխատանքիընթացքումիրարզուգակցելսովորողներիմտավորևֆիզիկականձև երը:
- Քայլառքայլսովորողներինընտելացնելաշխատանքայինկարգուկանոնին: Սովորեցնելճիշտուտեղին, նախնայողաբարծախսելնյութականռեսուրսները:
- Սովորողներինծանոթացնելտեղիբնականպայմաններինռեսուրսներին, եղածհնարավորություններին, արտադրականայնոլորտներինորոնքկանուգործումեն:
- Զարգացնելսովորողներիկազմակերպչականընդունակություններընայլն

Յուրաքանչյուր մանկավարժ իր սանի գիտակցությանը պետք է հասցի, թե ինչպես է գոյանում հանապազօրյա հացը, որը ուտում է, հագուստը, որը հագնում է , կոշիկը, որը կրում է: Այսինքն պետք է սովորեցնի թե ինչ միջոցներով է ստեղծվում մարդուն անհրայեշտ բոլոր բարիքները:

Աշխատանքային դաստիարակության իրականացման համար շատ կարևոր նշանակություն ունի <<Աշխատանքի ուսուցում>> առարկայի դասավանդումը դպրոցներում: Այս առարկան տարբեր դասարաններում ուսումնասիրվում է տարբեր եղանակներով ու միջոցներով: Կոնկրետ յուրաքանչյուր դասարանում լուծվում են տվյալ դասարանի աշակերտների մտավոր և գործնական ռեալ

հնարավորություններին համապատասխանող ուսումնադաստիրակչական խնդիրները: Աշխատանքային դաստիարակության մյուս բաղադրատարերըիրականացվում են ընտանիքում, ուսումնական կաբինետներում ու լաբարատորիաներում, արտադրական հիմնարկներում:

Ամեն մի գիտություն ունի իր առարկան: Բացահայտել այն նշանակում է սահմանել այդ գիտության յուրահատկությունը, գործունեության ոլորտն ու խնդիրները: Ցավոք, քիչ թե շատ համառոտակի պատասխանել այն հարցին, թե որն է գեղագիտության առարկան, շատ դժվար է: Խոսելով փիլիսոփայական գիտություններից մեկի առարկայի մասին, Հեգելն իրավացիորեն գրել է. Տրամաբանությունը<<նախապեսչիկարողասել, թեինչէայն, այլմիայննրաամբողջշարադրանքնէծնումառաջինանգամնրամասինանկդիմացություն ը>>: Այդպեսէլգեղագիտությանմեջ.այդգիտությանսահմաններիլրիվուրվագծումըմիայննր ամանրամասնշարադրանքըկարողէտալ:Սկսելովգեղագիտությանշարադրանքը, չիկարելիիրաժարվելնրաառարկայինախնականորոշսահմանումից: Գեղագիտությունըունիբազմադարյանպատմություն: Այսգիտությանզարգացմանընթացքումփոփոխվելենոչմիայնգեղագիտականհայացքնե րը, այլևնրակողմիցուսումնասիրվողհարցերիշրջանակը, նրաբունառարկանուխնդիրները:[9] Գեղագիտականդաստիարակությաննպատակըմարդկությանստեղծածգեղագիտակա նմշակույթըհետազասերունդներինհաղորդելնէ: Գեղագիտությունըմարդկայինմշակույթիկարևորտարրէ: Գեղագիտականմշակույթըբազմակողմէ: Նրանումառանձնանումեններետևյալտեսանկյունները.

- մարդկայինգեղագիտականգիտակցությունը, որըդրսևորումէնրանցպահանջմունքներում, դիրքորոշումներում,ճաշակում, հայացքներում, հայեցակարգերումևիդեալներում
- մարդուկենսագործունեությանառանձինտեսակներիգեղագիտականկողմերը

[9]Յուրի Բորև, Գեղագիտություն: <<Հայաստան>> հրատարակչություն: Երևան 1982

- մարդուբունգեղարվեստականգործունեությունը, որըպայմանավորվածէնրագեղագիտականնգեղարվեստականպահանջմունքներով

Անձնավորությանգեղագիտականդաստիարակությունըտեղիէունենումգեղագիտականգործունեությանարդյունքում:

Գեղագիտական դաստիարակությունըդաստիրակողի և դաստիրակվողների համատեղ ջանքերի գործընթաց է՝ դաստիարակվողների գեղագիտական կուլտուրան ձևավորելու համար: Գեղագիտական կուլտուրան ընդգրկում է անձի վարքի ու գործունեության, գեղագիտական գործունեության որոշակի աստրճան: Այսինքն, թե մարդը որքանով է հասկանում արվեստը, որքանով է ընդունակ կառավարելու իր գեղագիտական ընդունակություններն, զգացմունքները, թե նա կարող է տարբերել գեղեցիկն ու տգեղը, վեհն ու ստորը, հերոսականն ու ճղճիմը, ողբերգականն ու կոմիկականը:

Գեղագիտական դաստիարակության էության մեջ առանձնանում են երեք կողմեր

1. Անձի գեղագիտական ընկալումներն ու ըմբռնումները:
2. Գեղագիտական պատկերացումները ու դատողությունները:
3. Գեղագիտական մտածողությունն ու համոզմունքները:

Գեղագիտական դաստիրակության խնդիրներից ամենակարևորներն են՝

- Դպրոցականի գեղագիտական ընկալումների ու ըմբռնումների ձևավորումն ու դաստիրակումը.
- Գեղագիտական պատկերացումների ձևավորումն ու պատկերացումը.
- Գեղագիտական դատողությունների ու մտածողության ձևավուրումը.
- Գեղագիտական զգացմունքների ու գնահատումներ դաստիրակումը.
- Գեղագիտական ճաշակի դաստիրակումը
- Գեղագիտական ինքնադաստիրակությունը և այլն:

Այս խնդիրների լուծումից է կախված սովորողների գեղագիտական դաստիրակության իրագործումը: Այս խնդիրները կարող են լուծել այն մանկավարժները որոնք ունեն մասնագիտական կրթություն և իրենց մանկավարժական վարպետությամբ հասու են դրան:

Շատ կարևոր է դաստիարակվողների մեջ դաստիրակել գեղագիտական ճաշակ: Գեղագիտական ճաշակ նշանակում է գեղեցիկը զգալու և գնահատելու

ընդունակություն ունենալ, ինչպես նաև գեղեցկության չափանիշները հասկանալու, գեղեցիկի նկատմամբ հուզական զգայունակություն ունենալը: Վերը նշված մյուս խնդիրները լուծելու համար պետք է հաշվի առնել նաև արվեստի տարբեր բնագավառների յուրահատկությունները, իմանալ թե դրանցից յուրաքանչյուրը ինչի վրա է հենվում, որն է նրա հիմքը: Բացի արվեստի բնագավառները ճանաչելը դպրոցականները պետք է վարժվեն ստեղծագործելու մեջ: Հասնելու համար այն բանին, որ նրանք նկարագրեն պատմվացք, բանաստեղծություն գրեն, ասմունքեն, երգեն, պարեն, դերերով հանդես գան և այլն:

Դպրոցում գեղագիտական դաստիարակությունն իրականացվում է ըստ տարիքային առանձնահատկությունների: Այսպես, կրտսեր դպրոցականի հետաքրքրությունները կոնկրետ են, մակերեսային, ցրված: Օրինակ՝ նկարն ընտրելիս նա ուշադրությունն բևեռում է մի կողմի վրա, այն դիտելով նա բավականություն կամ անբավականություն է ստանում: Կրտսեր դպրոցականի ուշադրությունն անկայուն է: Արվեստի ստեղծագործությունների ընկալումը նրա համար ձանձրալի է: Դեռահասն ունի բավականաչափ գիտելիքներ, որոնց միջոցով հասկանում է շրջապատող աշխարհի երևույթները: Նա ի տարբերություն կրտսեր դպրոցականի ձգտում է թափանցել, երևույթների, առարկաների էության մեջ, որի համար հիմք է հանդիսանումհասարակական չափանիշները, իր գիտելիքներն ու փորձը, որն իր առջև ինքնադաստիարակության խնդիր է դնում: Ինքնուրույնությամբ որոշում է թե արվեստի որ ճյուղին է տիրապետելու: Ավագ դպրոցականներն ի տարբերություն դեռահասը, ունի իր սեփական հայացքները, համոզմունքները, այլ կերպ ասաց՝ձևավորված իր աշխարհայացքը, որը նրա համար հանդիսանում է հիմք՝գեղագիտական գնահատումների համար: Ավագ դպրոցականը կարողանում է կյանքի գեղագիտական կողմերն ու առանձնահատկությունները ոչ միայն իրարից տարբերել,այլ նաև դրանց մեջ ճիշտ ընտրություն կատարել: Նա կարողանում է գնահատել արվեստի՝ մարդկային կյանքի համար ունեցած նշանակությունը:

Ամենմիերեխադպրոցգնալիսանցնումէիրբնակավայրիփողոցներով: Դասերիցհետո, ծնողներիհետկամառանձին, նալինումէզանազանվայրերում՝ բազմապիսիտպավորություններքաղելովշրջապատից:

Այդամեննամբարվումէնրաhոգում,

վերածվումավելիկամպակասկայունպատկերացումների,

որոնքուղեկցումեննրանկյանքում:

Եթեդպրոցըձգտումէլուրջիաջողություններիհասնելիրսաներինդաստիրակելիս, նաչիկարողաչքփակելշրջապատիանցուդարձիվրա, պարփակելիրչորսպատերիմեջ: Ընդհակառակն, այդմիջավայրը դրտելով իբրև մանկավարժական ներգործության մի օբեկտ, դպրեցը, ուսուցչական կոլեկտիվը կկարողանան օգտագործել այնտեղ եղած դրականը և բանլ չեզոքացնել խոցելի երևույթների ազդեցությունը աշակերտների վրա:[10]

[10]Աթայան Ռ. Ա.: Աշակերտների գեղագիտական դաստիրակությունը: <<ԼՈՒՅՍ>> հրատարակչություն: Երևան 1974

# Գլուխ 2

## Բարոյական դաստիրակությունը արդի տարրական դպրոցում:

### 2.1 Բարոյական դաստիրակության էությունն և բովանդակությունը:

Բարոյական դաստիարակությանը դաստիարակության ողջ համակարգում հնագույններից է: Ըստէության, երբխնդիրառաջացավդաստիարակելմատաղսերնդին, այդժամանակիցէլբարոյականդաստիարակությունըդարձավիրատապևառաջնային: Պատահականչէոր,բազմաթիվգիտազեդարվեստականաշխատանքներում, հաճախ, «դաստիարակություն» հասկացությանփոխարենօգտագործելեն «բարոյականդաստիարակությունը» , որիհամակարգումէլընկալվելենդաստիարակությանբազմաթիվայլբոլորովինվերջերս առանձնացվածխնդիրներ:Բարոյականդաստիարակությանմասինխոսելուցառաջ, հարկէանդրադառնալդաստիարակությանծագման, էությանուզարգացման, թերևս, մանկավարժագիտությաննաևմյուսհասարակականգիտություններիկարևորագույնխ նդիրներին, որոնք, անշուշտ, կախվածենմարդուծագմանգիտականվարկածներիհետ, և ըստժամանակակիցզարգացմանանցելեներկուփուլ.

- -300-400 հազարտարիարաջ՝ արխանտրոպայինփուլ
- -300-200 հազարտարիառաջ՝ պալեոլիթի (որսորդության և հավաքչության):

Հենցզարգացմաներկրորդփուլնէ, որբնորոշվումէզենքիուքարեգործիքներիզարգացմամբուղղանցտիրապետմանուսուց մամբ:Իդեպ, Հայաստանումևս, որպեսմարդկությանբնօրրան, մարդուկայացումըկապվումէպալեոլիթիդարաշրջանին:[11]

Դաստիարակությունը,որպեսկենսաբանականբարձրակարգէակիգործունեությանտե սակ,հիմնականդրդապատճառներունենալովսոցիալտնտեսականպահանջմունքները ,զարգացելէմարդուկայացմանըզուգահեռ:

Աշխատանքըևաշխատանքիստեղծածարդյունքներըփոխարինեցինորսորդությաննու հավաքչությանը,իսկորսանելուևհատապտուղհավաքելուպարզագույնկարողությունն երըփոխարինվեցինաշխատանքայինկարողություններովուհմտություններով,որոնքի արկէհաղորդելևփոխանցել :

[11]Սիմոնյան Ց.Ռ , Հայ մանկավարժության պատմություն, Երևան 1998, էջ 6

Այսգործընթացներիբեռնընկածէրդաստիարակությանգործընթացիվրա,որըհանդիսա նումէկենսաբանականէակի (մարդու) բնապատմականփորձիգիտակցվածփոխանցումսերնդեսերունդ: Մարդկայինհասար ակությանզարգացմանտարբերփուլերում,բացիընդհանուր«բնականընտրությունից», դաստիարակությունը,կախվածհասարակությանպահանջմունքներից՝աշխատանքայ ին, բարոյական,ֆիզիկական,գեղագիտականևայլն,իրականացնումէրընթացիկգոյաբանա կանխնդիրներ: Մաթեմատիկականմոդելավորմանտեսանկյունիցայսօրվամարդնայն քանէլչիհեռացելիրնախահորից. ընդամենըավելացելենբնականընտրությանձևերը,զարգացելմտածողությունը,շատաց ելմիջոցները,թզենու տերևըփոխարինվելշքեղուհարմարավետհագուստներով: Իհարկե,այսբոլորըկարողէ պարզունակությունթվալ,սակայնխոսքըզուտգծապատկերայինտեսքիմասինէ: Բովան դակայինառումով՝դաստիարակությանգործընթացնուրահիմնականօբյեկտը՝մարդ ը,շատավելիբարդեն,հակասություններովլի: Անկախդաստիարակությանգործընթացիլայնածավալընդգրկման,այնեպատակայինգ ործընթացէ,դեպիլավըվերափոխելումարդունկամմարդկանց: Դաստիարակությանգո րծընթացիվրաազդումենբազմաթիվ՝սոցիալականուբնականմիջավայր,ընտանիք,դպ րոց,հասարակականհարաբերություններուարժեքներ,զարգվածայինլրատվամիջոցնե րևայլգործոններ,որոնքպայմանականորենկարելիէբաժանելերկումեծխմբի՝օբյեկտիվ ևսուբյեկտիվ: Առաջին՝օբյեկտիվիթվինենպատկանում.

1. գենետիկականևառողջականվիճակը,
2. ընտանիքիսոցիալ–մասնագիտականկարգավիճակը,
3. երկրիժամանակաշրջանիառանձնահատկությունները,
4. կրթադաստիարակչականինստիտուտների (համակարգի) մակարդակըևայլն:

Երկրորդ՝

1. դաստիարակներիևդաստիարակվողներիհոգեբանական,աշխարայացքային,պ ահանջմունքայինկողմնորոշումներնուշահերը
2. հասարակականհարաբերություններիակտիվությունը
3. մարդուևհասարակությանփոխներգործությունը,

4. անձնավորությանպատրաստակամությունըդաստիարակչականներգործությա
նկատմամբևայլն:

Դաստիարակությանգործընթացիծագմանուպատմականզարգացմանընթացքումբնա
կանաբար,խնդիրառաջացավճշգրտելումշտականզարգացմանմեջգտնվողդաստիարա
կությաննպատակը,որինախնականմիտումըֆիզիկապեսուժեղնգազաններինութռչուն
ներինսպանելուկարողսերնդիդաստիարակություններ,ևկրումէրհամընդհանուրբնույ
թ:Հետագայումավելացաննպատակայիննորխնդիրներ,իվերջո,դաստիարակության
պատակըհստակեցվեցբազմակողմանիններդաշնակձևավորվածանձնավորությանդա
ստիարակությանամբողջությանմեջ:Սոցիալ–
մշակութայինառումով`դաստիարակությաննպատակըգիտակցվածուպլանավորված
դաստիարակչականներգործությանմիջոցներովստացվածարդյունքներեն:
Սպասվողարդյունքներըդրականեննելնումենդաստիարակչականներգործությանմար
դասիրականէությունից:Այսառումովէլխնդիրէառաջանումճշգրտելուանձնավորությ
անդաստիարակվածությանմակարդակը: Գաղտնիքչէ,որհաճախշփոթումեն
«դաստիարակվածություն» և «կրթվածություն»
հասկացությունները:Վերջինսավելիշատբովանդակումէանձնավորությանգիտելիքնե
րիուկարողությունների,ինչպես՛նաևստացվածկրթությանլիակատարությանմակարդ
ակը,ուստիչիկարողբավարարելդաստիարակվածությանբովանդակայինմակարդակը
:ՄասնավորապեսՎ.Ա. Սուխոմլինսկինգրումէր.
«կրթվածմարդկանցիսկականդաստիարակություննամենիցառաջմարդու,նրահերոս
ականոգու,հայրենիքինանսահմաննվիրվածության,համոզմունքներինհավատարմութ
յան,հանունմարդուերջանկությանմտքիբոլորհարստություններինտիրապետելուպա
տրաստակամությաննիմտությանիմացություննէ»:
Իհարկե,այստեղմեծմանկավարժըհիմնականումնկատիէունեցելդաստիարակվածությ
ունը,որըբովանդակումէհետևյալորակներիառկայությունը,բարությունըևհոգատարու
թյունըշրջապատինկատմամբ,
ազնվությունըևպատասխանատվությունը,երախտագիտությունը,նվիրվածությունըև
այլն:
Այսբոլորորակներըմիաժամանակբնութագրվումենորպեսբարոյականդաստիարակու
թյանխնդիրներ,ուստիպատահականչէ,
որդաստիարակվածությանմակարդակըբնութագրելիսօգտագործվումէ

«բարոյականէնառաքինի»բառակապակցությունը։Բարոյականդաստիարակությունն արտահայտումէդաստիարակությաննպատակներիուբովանդակությանամբողջությա նկարևորագույնուղղություններիցմեկը։
Բարոյականդաստիարակությանիրականացմանչգերազանցվածոլորտենդպրոցներըև մյուսուսումնականհաստատությունները,որպիսիքմատաղսերնդիբարոյակամայինոր ակներիձևավորմաննպատակովկազմակերպումէինդեռևսնախքանՔրիստոսիծնունդը ։
Հինհունականագելլաներնուէֆեբիաներըկարևորագույնտեղէինհատկացնումբարոյա կանդաստիարակությանը։
Հնագույնժամանակներիցմինչևմերօրերըլույստեսածգեղարվեստականումանկավարժ ականգրականությանգերակշիռմասըվերաբերումէբարոյականդաստիարակությանը։
Եվայսպես,դպրոցները,հնուցի վեր,որպեսբարոյականդաստիարակությանիրականացմանօջախներեն։
Բարոյականորակների (բարոյականության) փոփոխություններըտեղիենունենումմիշարքգործոններիազդեցությամբ.

- կրոնադավանաբանական,
- սոցյալ-քաղաքական ու պատմական,
- ազգային-էթնիկական,
- քաղաքակրթական և այլն:

Բարոյական դաստիարակաության տեսական հիմքերը կազմում են բարոյականության համապատասխան որակներ: Բարոյական դաստիարակության համակարգային խնդիրներն են.

- բարոյական գիտակցության ձևավորումը,
- բարոյական կարողությունների ձևավորումը,
- բարոյական վարքի և գործունեության ձևավորումը,

Բարոյականությունը,որպեսբարոյականդաստիարակությանգիտատեսականհիմք,հա նդիսանումէհասարակականգիտակցությանձևնավելիհին,քանհասարակականգիտ ակցությանմյուսձևերը:
Անցյալիհայմանկավարժականմիտքընսխիստկարևորությունէտվելսերնդիբարոյակա նորակներիդաստիարակությանը։

ԵզնիկԿողբացինգրումէ.«...Եվարդ՝ինչպե՞սիհայտկգարգործերիընտրումը,եթեմարդըչունենարերկակի՝ենթարկվելուևչենթարկվելուիրավունք:

Ուրեմնպարզէ,որմարդնազատակամեղավ՝կատարելուբարինկամձգտելուդեպիչարը»:[12]

Բարոյականությանտեխնոլոգիականհիմքերնենհասարակականկարծիքը,բարոյականիամոզմունքները,զգացմունքներնուսովորույթները:

Աhռելիդերունշանակությունունիհասարակականկարծիքը:Դրանքկարողենիրենցվրակրելավանդույթներիբեռը,հաճախէլհանդիսանալհասարակականհարաբերություններիկարգավորիչներ:Հասարակականկարծիքըկարգավորումէհասարակականհարաբերությունները,և,որկարևորէ,ճշգրտումէանհատիևհասարակությանհարաբերությանհարցը:

Հասարակականկարծիքիուժըհատկապեսհստակէզգացվումդեռահասությանշրջանում,երբհաճախդեռահասներիհամարավելիկարևորէընդհանուրկարծիքը,քան՝ուսուցիչներիևծնողների:

Հարկչկազերագնահատելհասարակականկարծիքիդերնայսօրվապայմաններում,սակայնգաղտնիքչէ,որսովորողներըշատդեպքերումհասարակականկարծիքովենճշգրտումիրենցտեղնուդերըդպրոցումուդասարանումտանըևփողոցում,մեծերիուիրենցհասակակիցներիհարաբերություններում:Բարոյականմյուսքննաբաղադրիչըբարոյականհամոզմունքներնեն:Համոզմունքըերկարատևաշխատանքիարդյունքէ:

Հիմքումունենալովգիտելիքնուբարոյակամայինորակները՝համոզմունքիձևավորումըպահանջումէերկարատևփորձաշրջանևմեծածավալիմացականուկամայինաշխատանք:

[12] Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Երևան 1970, էջ 49

## 2.2 Բարոյական դաստիարակության ուղիները ուձները

Բարոյական դաստիարակության մեթոդները մանկավարժական աշխատանքի այն ուղիներն ու եղանակներն են, որոնց օգնությամբ իրականացվում է անձնավորության բարոյական որակների նպատակաուղղված ձևավորումը:

Դաստիարակության մեթոդները որոշում են դաստիարակության նպատակներով և բովանդակությամբ: Նպատակը միշտ մնում է մեթոդի արժեքավորության գլխավոր չափանիշը:

Դաստիարակության մեթոդները պետք է համապատասխանեն նրա նպատակներին, քանի որ դպրոցը լուծում է համակուղմանի զարգացած և հասարակության համար գիտակցաբար պայքարող սերնդի դաստիրակության բարդ խնդիրը: Աշակերտների մեջ հասարակության օգտին իրենց ուժերի և ընդունակությունների չափով աշխատելու պահանջը ձևավորելու նպատակը առանձնապես արդիական է դարձել աշխատանքի ընթացքի մեջ աշակերտներին ներգրավելու, նրանց ուժերի լարելու, շրջապատի կյանքը բարելավելուն մասնակցելու մեթոդները: Աշակերտների մեջ անարդարության, ձրիակերության, պաշտոնամոլության, անազնիվության, հասարակական շահերի խախտումների հանդեպ անհանդուրժողականություն դաստիրակելու խնդիրը որոշում է այն միջոցները ձեռք առնելու անհրաժեշտությունը, որոնք աշակերտներին մղում են դեպի ինքնադաստիրակությունը, դեպի կոլոկտիվում բարոյականության նորմաները հաստատելու համար մղվող պայքարը:

Բարոյական դաստիարակության մեթոդները որոշվում են երեխաների մեջ բարոյական որակներ ձևավորելու պրոցեսի հոգեբանական բնույթով:

Դաստիարակության միայն այն մեթոդներն են արդյունավետ լինում, որոնք ունենում են հաջող ընթացք: Բարոյական դաստիարակության պրակտիկայում երեխաները պետք է յուրացնեն բարոյական գիտելիքներ այնուհետև վարժվեն այդ գիտելիքները կյանքում կիրառելու հմտություններին: Հաճախ այս մոտեցումը անպտուղ է մնում, քանի որ չի համապատասխանում բարոյական որակների գոյացման հոգեբանական բնույթին: Աշակերտների մեջ այս կամ այն բարոյական որակը դաստիրակելու համար պետք է նրա մեջ ձևավորել համառ ձգտում, այնպիսի արարքներ, գործողություններ կատարելու պահանջ, որոնց մեջ մարմնավորում է այդ

որակը: Իսկ ուժեղ հուզական ազդակները երեխաների մեջ ծնում են պրակտիկ գործունեության մեջ, անմիջական կենսական իրադրություններում և, ամենից առաջ, լավ կազմակերպված կոլեկտիվում: Դա երեխայի հուզական դրական փորձի ամենահզոր աղբյուրն է, բարոյական համոզմունքների զարգացման հող:

Բարոյական կանոններ իմանալը ինքնին դպրոցականին չի դրդում իր վարքում ղեկավարելու դրանցով: Ավելին, եթե երեխաները առանց համապատասխան կենսական փորձի են յուրացնում բարոյական հասկացությունները, դա ոչ միայն քիչ արդյունավետ է, այլև կարող է հանգեցնել ձևամոլության՝ բարոյական դաստրիակության մեջ, երբ արարքները չեն համապատասխանի խոսքերին: Դպրեցականի մեջ բարոյական զգացմունքների և արարքների գործնական փորձի առաջացման հոգսը մշտապես պետք է լինի դաստիարակի ուշադրության կենտրոնում:

Անձնավորության բարոյական դաստիարակության բարդ պրոցեսում տարբերմեթոդներ, կատարելով միանգամայն որաշակի դերեր, ընդհանուր խնդիրներ են լուծում: Այս կամ այն մեթոդն օգտագործելով դաստրիակները պետք է ճիշտ իմանան, թե բարոյական որակի գոյացման համար հատկապես ինչի՞կարելի է հասնել այդ մեթոդի շնորհիվ:

Բարոյական դաստիարակության մեթոդները զանազանվում են համաձայն այն բանի, թե բարոյական որակները գոյանալու ընթացքում ի՞նչն են դրանք առավելապես ապահովում:

Դպրոցի մանկավարժական հարուստ փորձը և մանկավարժական ու հոգեբանական հետազոտությիւննորի  տվյալները թույլ են տալիս առանձնացնել բարոյական դաստիարակության մեթոդների երկու հիմնական խմբեր.

1) աշակերտներիմեջհասարակականվարքիևհասարակականվարքիփորձը, և

2) բարոյականգիտակցությունըձևավորելումեթոդները:

Մեթոդներիառաջինխմբինենվերաբերում.

- հասարակականվարքիձևերիինընտելացնելումեթոդը,
- սովորողներիանըօգուտգործունեությունըկազմակերպելումեթոդը,
- հասարակականվարքիփորձըկազմակերպելումեջստեղծագործականխաղերնօգտագործելումեթոդը,

Մեթոդներըմանկականգործունեությունըերեխաներիարարքներըկազմակերպելուզ անազանեղանակներեննողղվածենբարոյականվարքիսովորույթներդաստիրակելուն պատակին: Այսմեթոդներըպետքէներգրավեներեխաներիառօրյակյանքիմեջ, դրանքերբեմնդժվարէտարբերելիբրնդաստիարակությանհատուկնպատակաուղղված միջոցներ: Դպրոցականներըորքանտարիքովմեծ, Նույնքանսուրկերպով, բացասականորենենարձագանքումիրենց՝ դաստիարակությանառարկայիդիրքումդնելուամենմիփորձին: Իտարբերությունուսումնականառարկաներըյուրացնելուդեպքումկատարվողվարժու թյունների, բարոյականվարժություններիէությունըոչմիայնաշակերտներիմեջկարողությունորև հմտություններմշակելու, այլև, ամենիցառաջ, ինքնիրենհամապատասողանձնովպահելումահանջմունքիմեջէ: Դրահամարանհրաժեշտէ, այնարարքները, որոնցմեջդաստիրակըուզումէվարժեցնելերեխային, նրահամարգրավիչնիրականարժեքունենան, որպեզիդառնաննրաձգտումներիբնականարտահայտությունը:

Երկրորդ խմբին են վերաբերում.

- բարոյագիտական թեմաներով պատմությունները,
- բարոյագիտական թեմաներով դասխոսությունները,
- բարոյագիտական զրույցները,
- բարոյագիտական թեմաներով բանավեճերը,

Բոլոր այդ մեթոդներն աշակերտի գիտակցության վրա խոսքի անմջական ազդեցության ճանապարհ են, որոնց նպատակն է նրա մեջ ձևավորել որոշակի բարոյական պատկերացումներ և հասկացություններ, առաջացնել բարոյական զգացմոնքներ և բարոյական գնահատականներ: Այս մեթոդները անձնավորության բարոյական որակների ձևավորման հիմնական մեթոդներն են: Դրանք ապահովում են աշակերտների որոշակի բարոյական ձգտումների զարգացումը և այդ ձգտումները վարքի մեջ իրագործելու միջոցների յուրացումը:

Դաստիարակության իրական պրոցեսի մեջ միշտ չէ, որ կարելի է հույս դնել բոլոր պայմանները և հանգամանքները լավագույն կերպով զուգազցելու վրա: Նույնիսկ դաստիրակչական պրոցեսի լրիվ մտածված կառուցումը կապված է դրա անսահման

տարբերակված նպատակներից շեղվելու բազմաթիվ դեպքերի հետ, երբ բարոյական դաստիարակության հիմնական մեթոդների ներգործությունը ուժեղացման և օգնության կարիք ունի: Այս ամենից ելնելով պրակտիկայում օգտագործում ենք դաստիրակչական հետնյալ մեթոդները

- խրախուսանքը՝ որպեսընդհանուրկամառանձիներեխայիարարքների, գործողություններիդրականգնահատմանարտահայտություն,
- պատիժ՝ որպեսանձնավորությանկամընդհանուրհասարակականպահանջներըներկայ ացնելուհատուկձև:

Բարոյականդաստիարակությանյուրաքանչյուրմեթոդպետքէպարզաբանել,
թեո՞րնէնրաէությունը,
ի՞նչդերէկատարումտվյալմեթոդըբարոյականորակներձևավորելուպրոցեսում:[13]
Բարոյականթեմաներովպատմելումեթոդըկիրառվումէկրտսերևմիջինդպրոցականտ արիքիերեխաներիդաստիարակչականաշխատանքներում:
Բարոյականթեմաներովպատմումըբարոյագիտականբովանդակուրյունունեցողկոնկր ետփաստերինիրադրություններիվառ, հուզականշարադրանքէ:
Ներգործելովերեխաներիզգացմունքներիվրա,
այսմեթոդըօգնումէհասկանալյուրացնելնրանումեղածբարոյականգնահատականնե րինվարքինորմաներիիմաստը:
Պատմելումեթոդիհիմնականդերըաշակերտներիբարոյականգիտելիքներըհամալրելը նրանցմեջբարոյականճիշտհասկացություններմշակելնէ:
Պատմելումեթոդիվառևհուզականբովանդակությունըընդունակէոչմիայնբացահայտել աշակերտներինախկինումանհասկանալիբարոյականհասկացությունը,
այլնաևնրանցմեջդրականվերաբերմունքառաջացնելայդբարոյականնորմայինհամապա տասղանարարքիհանդեպ, ազդելերեխայիվարքիվրա:
Այսմեթոդիմյուսդերըդպրոցականներիբարոյականփորձըայլմարդկանցսկոլեկտիվնե րիբարոյականվարքիփորձովհարստացնելնէ:
Այներեխաներինօգնումէյուրացնելուավելիլայնբարոյականհայացքներևդատողությու ններ, ավելիբարձրբարոյականդիրքիցքննելութե՝ իրկոլեկտիվիկյանքըևթեիրսեփականվարքը:

[13] ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ: Դասախոսություններիդասընթաց: <<ԼՈՒՅՍ>>ՀրատարակչությունԵրևան 1969

Բարոյականթեմայովպատմումըկատարումէնաևմեկուրիշդեր.
այնդաստիարակությանմեջծառայումէիբրևդրականօրինակնօգտագործելուեղանակ:
Պատմելումեթոդիօգտագործմանձևերըբազմազանեն: Դրանքեն՝
հուզիչպատմություններիհաղորդումը,
ընթերցածգեղարվեստականերկիմեկնաբանումը,ներկայացումընկալելունախապա
տրաստությունընայլն: Պատմելումեթոդիկիրառելուհաջողությունըկապվածէթե՝
պատմելուբովանդակությանթե՝այնանցկացնելուբնույթիվերաբերյալորոշակիպահա
նջներըպահպանելուհետ:
Կրտսերդպրոցականներիհամարբարոյականթեմաներովպատմածներըկարճեննհուզ
ական, իրենցբովանդակությամբևհերոսներիապրումներովմո
տեներեխաներիփորձին, ունենքիչթվովգործողանձեր:
Դեռահասներիհամարպատմումնավելիբարդէ,
իրենցբարձրիմաստովհուզողարարքներըհոգեբանորենավելիհարազատեննրանց,
թեևդրանքբացակայումեննրանցանձնականփորձում:
Կրտսերդպրոցականներիհամարպատմումը,
հաղորդելովբարոյականարարքներիմասիննորտեղեկություններ,
պարունակումէփաստերիհամադրումևորոշակիընդհանրացումներ:
Դեռահասներիհամարարվողպատմվածներըարժեքավորեննրանով,
որնրանցառջևդնումեննարարքներիևդրանցպատճառներիհամադրմանառաջադրանք,
ստիպումենմտցնելպատմվացքիհերոսներիարարքներիդրդապատճառներիմասիննհ
ետևությունններուընդհանրացումներանելիսինքնուրույնությունդրսևորել:
Բարոյագիտականպատմանօրինակկարողենծառայելգեղանկարչականերկերը,
կինոնկարներըևուրիշշատբաներ: Բարձրբարոյականարարքների,
հերոսականսխրանքներիմասինպատմածըերեխաներիվրաանհամեմատուժեղտպավ
որությունէթողնում, երբանցկացվումէ ,օրինակ. արշավխարույքիշուրջը,
եղբայրականգերեզմանիմոտ, հուզիչիմաստներովլիմասունքներիթանգարանում:
Այստեղպատմածիբովանդակությանհուզականներգործություննօժանդակումէշրջապ
ատողմիջավայրիհուզականներգործությունը: Շատկարևորէնաևհոգտանել,
որպեսզիպատմածիցստացվածտպավորություններնուառաջացածզգացմունքներըեր
կարպահպանվիերեխաներիմեջ:
Դամեծչափովկախվածէպատմումնանցկացնելուհամարընտրվածժամանակիցևհետա

գագործունեությունից:
Հաճախբարոյագիտականպատմումիդաստիարակչականներգործությունըխիստիջնու
մէմիայնայնպատճառով,
որերեխաներըպատմածըլսելուցանմիջապեսհետռանցնումենթե՝
բովանդակությամբևթե՝տրամաբանությամբմիանգամայնտարբերգործի, օրինակ,
սպորտայինմրցության:
Բարոյականթեմայովդասախոսությունըմիմեթոդէ,
որըմոտէբարոյագիտականպատմելումեթոդին,
բայցտարբերվումէմիշարքառանձնահատկություններով:
Դպրոցականներիհամարկարդացվողբարոյականթեմաներովդասաղոսությունըմատչ
ելի՝
որևէբարոյականհասկացությանէությանևբովանդակությանշարադրանքէկամէլ՝այսկ
ամայնբարոյականպրոբլեմիհիմնավորվածլուսաբանում:
ՌԻստինայդմեթոդնօգտագործվումէավագդպրոցականներիհետտարվողաշխատանք
ներում:
Բարոյագիտականթեմայովդասախոսությանհաջողությունըամենիցառաջորոշվումէդ
րակուռկառուցվածքով, ապացուցմանտրամաբանությամբևփաստարկումներով:
Ավագդպրոցականներըհատկապեսզգայունկերպովենարձագանքումփաստերիհամոզ
չությանը, միայնլավհիմնավորվածպարզաբանումըկարողէնրանցստիպել,
որհրաժարվենսխալվճռիհանգելուց:
Այսմեթոդը, ինչպեսնբարոյագիտականթեմայովպատմումը,
ոչմիայնգիտելիքներէտալիսբարոյականությաննորմաներիմասին,
այլևօժանդակումէդրանցհանդեպաշակերտներիհուզականորոշակիվերաբերմունքին:
Պատանեկանհասակըաշխարհայացքիլարվածկերպովկազմավորմանշրջանէ:
Բարոյականգաղափարներնառանձնապեսգրավումենավագդպրոցականներին,
նրանցմեջբուռնարձագանքենառաջացնումընդունակեններազդելունրանցվարքիբար
ոյականդրդապատճառներըձևավորելուվրա:
Այսմեթոդիօգտագործմանձևերըտարբերեն:
Դրանքկարողենլինելաշակերտներիհամարկազմակերպվողառանձինելույթներ՝
հետագաքննարկումով, կամդասախոսություններիշարքեր,
որոնքմշակվածեննհատկապեսդպրոցականլեկտորիումիհամար:

Այսմեթոդըյուրովիէկիրառվումայսպեսկոչվածբառոյականությանդասերին, որոնքվերջինտարիներինհաջողությամբգործադրվումենմիշարքդպրոցներում, որպեսավագդպրոցականներիբարոյականդաստիարակությանձևերիցմեկը: Այսմեթոդըհատկապեսարդյունավետէ, եթեկիրառվումէհետևողականորեն, կանոնավորապես, այլոչթեժամանակառժամանակ: Հենցայդդեպքումայնլավագույնձևովէնպաստումբարոյականփորձըավագդպրոցական ներիկողմիցգիտակցելուննրանցմեջբարոյականհայացքներիհամակարգստեղծելուն:

---

Դաստիարակությանմեջվճռորոշդերէհատկացվումբարոյականդաստիարակությանը, երբսովորողներիբարոյականընկալումներըդառնումենվճռորոշ: Իդեպ, այսխնդրիլուծմանուղղությամբբավականինառաջընթացէապրելհատկապեսչինական մանկավարժականմիտքնուհամակարգը: Հիմքումունենալովկոնֆուցիզմիհզորուսմունքը՝ չինականմանկավարժությունը, բարոյականդաստիարակությունըբաժանումէերկուգլխավորուղղության.

ա)ազգային-պետականորակներ

բ)անձնային-հասարակականորակներ:

Հետաքրքիրնայնէ,որառաջինուղղությունըբնորոշումէպետականազգայինռազմավար ությունըևհամարյաանփոփոխէ,իսկերկրորդը՝ վերաբերվումէդաստիարակչականտեխնոլոգիաներին,որըզարգացողուփոփոխական է:

Բարոյականորակներիճշգրիտընկալումըսովորողներիկողմիցկարևորագույնդաստի արակչականխնդիրէ, որիլուծմանուղիներիցմեկըբարոյագիտականզրույցներիանցկացումնէ: Բարոյագիտականզրույցներըչպետքէկրենքարոզչականբնույթ,զրույցներիթեմաներըպ ետքէընտրվենխնամքով,պատճառաբանվածնպատակային՝ հաշվիառնելովսովորող ներիտարիքայինառանձնահատկությունները:

Բարայագիտականզրույցըդաաշակերտներիհետվարքիկոնկրետփաստերի, արարքներիքննարկումնէ, որոնքմոտենկոլեկտիվումնրանցկյանքիփորձին: Իտարբերությունբարոյականպատմումի, որշարադրումէուսուցիչը, բարոյագիտականզրույցըմիմեթոդէ, որըիրենից՝ աշակերտներին, ներգրավումէբարոյականարարքներիմասինճիշտգնահատումներևդատողություններմ

շակելուընթացքիմեջ:
Երեխաներիհետհամատեղվերլուծելովկյանքիիրականիհանզամանքներումմարդկանց կատարածարարքները, դաստիրակնաշակերտներիօգնումէ, որնրանքհասկանանևգնահատենդրանցբարոյականնշանակությունը: Բարոյագիտականզրույցներիհետևանքովերեխաներիմեջբարոյականորակներիմասի նառաջանումէհարուստ, կոնրետբովանդակությամբհագեցածընդհանորպատկերացում:Բարոյականզրույցիմե թոդիդերերիցմեկըձեռքբերվողկոլեկտիվհարաբերություննորիփորձըգիտակցելուհար ցումերեխաներիօգնելնէ;
Բարոյագիտականզրույցիառանձնահատկությունըճկունություննէ, որըհնարավորությունէտալիսթե՝ շուտարձագանքելկոլեկտիվկյանքիընթացիկիրադարձություններինթե՝, միայամանակ, թույլէտալիսբոլորովինդուրսզալտվյալդասարանիշրջանակներից: Բարոյագիտականզրույցինյութկարողենդառնալգրականիհերոսների, ներկայացումներինկինոնկարներիգործողանձանցգործողությունները, կոլեկտիվումկատարվողարրքներընիրադարձությունները:
Զրույցինյութըպետքէհարազատլինիերեխաներիուզականփորձին: Չիկարելիաշակերտներիցսպասելնպահանջել, որակտիվորենմասնակցեննրանցհամարբարոյականբնույթիդժվարհարցերքննարկելո ւն, եթեդրանցիմքծառայողփաստերըկապվածենաշակերտներիխորթզգացմունքներիհե տ: Բարոյագիտականայնզրույցները, որոնքկապվածենհեռավորմարդկանցևիրադարդություններիհետ, մանկականկոլեկտիվիիրականփորձիվրահենվելուդեպքումմիայնկարողենհաջողությ ունունենալ:
Քննարկումներիիմաստըհենցերեխաներիօգնելնէ, որըմբռնենբարոյականվարքիիրենցհուզականփորձը, մասնատենայն, տպավորություններինապրումներիանձնզանգվածըվերածենբարոյականորակներձև ավորողիսկականիհենարանի:
Զրույցիընթացքումշատկարևորէիհայտբերելևհամադրելբոլորտեսակետները, երեխաներինդրդելորոնելուքննարկվողգործողություններիգնահատականներիհիմնա

վորումը, վերլուծելուայնղրդապատճառները, որոնցհետևանքովկատարվելենայդգործողությունները:
Չպետքէանմիջապեսմերժելաշակերտներիտվածսխալգնահատականները, չպետքէնրանցճնշելսեփականհեղինակությանուժով:
Բարոյագիտականզրույցըճիշտղեկավարելընշանակումէ՝ երեխաներինօգնելինքնուրույնկերպովհանգելուճիշտհետևության, գտնելուբարոյականիրադրության, մերկարծիքով, միակընդունելիլուծումը:
Եզրափակիչխոսքովուսուցիչըիմիէբերումարտահայտվածբոլորկարծիքները, գնահատումէդրանքևպաշտպանումէճիշտդատողությունները:
Բարոյագիտականզրույցիձևերըբազմազանեն: Այնկարողէանցկացվելթե՝ որպեսզեղարվեստականստեղծագործությանքննարկում, թե՝ որպեսգրական<<դատ>>, թե՝ որպեսէքսկուրսիայիկամարշավիմասինմտքերիփոխանակությունևայլն:
Բայցբոլորդեպքերումաշակերտներըմասնակցումենորոշակիարարքների, վարքիփաստերիճիշտգնահատականըհամատեղորոնելուն:
Բարոյագիտականզրույցիհատուկտարատեսակըմանկականկոլեկտիվիհետհամատե ղգործերիևհանձնարարություններիկատարմանքննարկեւմնէ:
Դեռահասներըսովորումենճիշտմոտեցումունենալընկերներիվարքիգնահատմանը, տարբերփաստերըևմասնակիցներիգործողություններըհամադրելգործիհանդեպնրան ցունեցածվերաբերմունքիհետ:
Բարոյագիտականթեմաներովբանավեճըաշակերտներինբարոյականությանմասինճի շտհասկացություններմշակելումեջընդգրկելումեթոդէ:
Այսմեթոդիէությունըաշակերտներիհետմիասինբարոյականայնպիսիպրոբլեմներիքն նարկելնէ, որոնքշոշափումենշրջապատողկյանքի, հասարակության, մարդկանց, ինքնիրնկատմանբունեցածվերաբերմունքիկարևորագույնհարցերը:
Բանավեճիառանձնահատկությունըբանակռիվնէ, փաստարկներիպայքարը, որընպատակունիմշակելորոշակիդասողությունևհամոզելայսկամայնտեսակետիարդ արացիությանմեջ:
Այսմեթոդիհիմնականդերըբարոյականորոշակիդատողություններիարդարացիությա նմեջաշակերտներինհամոզելունրանցբարոյականհայացքներիհամակարգըմշակելու նօգնելնէ:

Բանավեճըավագդպրոցականներիհետաշխատելումեթոդէ: Համապատասղանելովայստարիքիառանձնահատկություններին, այնբավարարումէպատանու՝ կյանքիիմաստիմասինմտորումներինայդիմաստըիրհամարգտնելուձգտմանպահանջ մունքները: Հասարակականհարաբերություններիգաղափարականբովանդակությունը, բարոյականկատեգորիաներըխորապեսհուզումենավագդպրոցականներին: Բանավեճըբարոյականդաստիրակությանարժեքավոր, բայցչափազանցբարդմեթոդէուպահանջումէայննախապատրաստելուևանցկացնելում անրակրկիտղեկավարում: Անհրաժեշտէհստակկերպովսահմանազատելբանավեճիհամարառաջքաշածհարցերի շրջանակը, քանիորերբեշոշափումենբազմաթիվմեծթեմաներ, դրանցթեմաներըդառնումէճապաղ: Հաճախուսուցիչներըխուսափումենբանավեճերանցկացնելհասարակականկյանքիսո ւրխնդիրների, սիրոհարցերիվերաբերյալևայլդժվարթեմաներով: Այսհարցերըպետքչէպարտադրել, բայցերբդրանքհուզումենդպրոցականներին, վեճերինտարակուսանքներիառարկաենդառնում, չպետքէդրանցկողքովանցնել: Հաջողությանկարևորագույնպայմանըբանավեճիընթացքումմեծահասակներիճիշտվե րքագիծնէ: Դաստիրակներնպետքէառավելագույններբանկատությամբևհարգանքովվերաբերվեն աշակերտներիկարծիքին: Դաստիրակիհելույթըկարողէլինելև՝ կրքոտ, և՝ զայրալի, և՝ հոգեկան, բայցայդհույզերըպետքէուղղվենոչթեսխալվողաշակերտիանձնավորությանը, ումհետբանակռվումէդաստիրակը, այլնրակեղծփաստարկներիբովանդակությանը: Բանավեճըարժեքավորէհենցնրանով, որաշակերտներինհարստացնելովդրդումենքհետազամտորումների,որոնքտալիսենճ իշտգաղափարներնամրապնդելուևսխալնեիցհրաժարվելուհնարավորություն: Բարոյականգիտակցությանձևավորմանմեթոդներինշանակությունն առանձնապեսմե ծէնրանով, որդրանքաշակերտիմեջհասարակական,քաղաքականհայացքներևհամոզմունքներեն մշակում, հիմքենկազմումոչմիայնքաղաքականհասկացությունները,

այլնբարոյականգիտակցությանորոշակիմակարդակը:

Այսպիսովդպրաձևավորումըներկայացնումէդպրոցականիանձնավորությունըդաստիրակելունզանգացնելուլայնընդհանուրխնդիրը:[14]

գտելուղեպիչարը»:

ՀՀԿրթությանօրենքընախիստկարևորությունէտալիսմատաղսերնդիբարոյականդաստիարակությանխնդրին՝այնհամարելովլիարժեքկրթվածությանպարտադիրխնդիր:[15]

Իդեպ, բարոյականդաստիարակությանառանձնակիկարևորությունըզգացվումէհատկապեսնախազորակոչայիներիտասարդությանռազմահայրենասիրականդաստիարակությանհամակարգում: Սաբացատրվումէնրանով, որհայրենասիրությանդաստիարակությունըհամարվումէբարոյականդաստիարակությանկարևորագույնխնդիրմիկողմից, իսկմյուսկողմիցվաղվազինվորը, հայրենիքիպաշտպանըպետքէունենակայունբարոյակամայինորակներ:

[14]ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ: Դասախոսություններիդասընթաց: <<ԼՈՒՅՍ>>ՀրատարակչությունԵրևան 1969
[15]ՀՀօրենքըզինապարտությանմասին, 16.09.1998 հոդված8

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մեր կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքում հանգեցինք հետևյալ եզրակացությունների.

1. Արդի ժամանակաշրջանում՝ տարրական դպրոցում առաջնային է համարվում կրտսեր դպրոցականի բարոյական դաստիարակության կազմակերպման գործընթացը;
2. Դպրոց-ընտանիք, ծնող-դասվար համագործակցության սկիզբը դրվում է տարրական դպրոցում և հատկապես տարրական դպրոցում է ներկայացվում միմյանց նկատմամբ պահանջներ. Դպրոցը պահանջում է ծնողներից, ծնողները դպրոցից:
3. Մեր կողմից կատարված հետազոտությունները ցույց տվեցին, որ կրտսեր դպրոցականի բարոյական դաստիարակության ձևավորման գործում մեծ դերակատարություն ունեն ինչպես ծնողները, այնպես էլ դասվարները, ուստի կարևոր է դառնում միմյանց հետ համագործակցության արդյունավետ միջոցների, ուղիների որոնումը, տարբեր միջոցառումների անցկացումը ինչպիսիք են.

    - Ծնողների հետ հարց ու պատասխանի երեկոները, կլոր սեղան քննարկումները, բարոյախոսական զրույցները, բանավեճերը:
    - Դասվարների և ծնողների հաճախակի հանդիպումները:
    - Ծնողների մասնակցությամբ բարոյախրատական և դաստիարակչական միջոցառումներ կազմակերպելը,անհատական մոտեցում ցուցաբերելը, աշակերտի պահանջների հաշվի առնելը :

4. Կրտսեր դպրոցում բարոյական դաստիարակության խնդիրների լուծման պայման կարող են լինել.

- Դասվարի բարոյական վարքագծի փոխանցումը և արտացոլումը աշակերտի գիտակցության մեջ:
- Հայրենիքի,ազգի, մշկույթի,ավանդույթների նկատմամբ հոգատար վերաբերմունքի սերմանումը:

- Պահանջկոտությունը, պատասխանատվության զգացումի դաստիարակումը, մարդասիրական հարաբերությունների հաստատումը,նրբազգացողության պահպանումը,հանդուրժողականությունը:
- Դասղեկները ծնողներին մանկավարժական խորհուրդ են տալիս ընդանիքում երեխաների դաստիրակության մասին, օգնում են կազմել արդյունավետ ռեժիմ, հանձնարարում են մանկավարժական գրականություն:

# ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աթայան Ռ. Ա.: Աշակերտների գեղագիտական դաստիրակությունը: <<ԼՈՒՅՍ>> հրատարակչություն: Երևան 1974
2. Ամիրջանյան Յու. Ա., Սահակյան Ա. Ս., Մանկավարժություն, Երևան, 2005 էջ 333-386 էջ
3. Բալյան Ա. Ա., Դպրոցականների գեղագիտական դաստիրակությունը, <<Լույս>> հրատարակչություն , Երևան 1979
4. Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Երևան 1970, էջ 49
5. Թաղևոսյան Հ. Հ., Դպրոցականների համակողմանի դաստիրակությունը դպրոցի վերակառուցման պայմաններում, Երևան <<Լույս>> ,1989, էջ 198
6. ՀՀօրենքըզինապարտությանմասին , 16.09.1998 հոդված8
7. Ղույումչյան Գ. Ե. , Մանկավարժություն :Դասագիրք բուերի համար: Երևան ,Զանգակ-97 , 2005 թ. 357-362 էջ 16.09.1998
8. Ղույումչյան Գ. Ե., Մանկավարժություն Երկու գրքով , Գիրք I: Երևան 2005
9. ՂույումչյանԳ. Ե., Մանկավարժություն Երկու գրքով , Գիրք II: Երևան 2005
10. ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ: Դասախոսությունների դասընթաց: <<ԼՈՒՅՍ>> Հրատարակչություն Երևան 1969
11. Մանուկյան Ս.Պ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ: /Ուսցումական ձեռնարկ: Երկրորդ բարեփոխված հրատարակություն: <<Զանգակ-97>>,2005
12. Յուրի Բորև, Գեղագիտություն: <<Հայաստան>> հրատարակչություն: Երևան1982
13. ՊետրովսկիԱ.Վ., Տարիքային և մանկավարժական հոգեբանություն,<<Լույս>> հրատարակչություն , Երևան 1977թ. 84-125 էջ
14. Սիմոնյան Ց.Ռ , Հայ մանկավարժության պատմություն, Երևան 1998, էջ 6
15. Սուխումլինսկի Վ.Ա., Դաստիրակության մասին, <<Լույս>> հրատարակչություն, Երևան 1976 թ., 335 էջ
16. Սուխումլինսկի Վ. Ա., Պավլիշի միջնակարգ դպրոցը, <<Լույս>> հրատարակչություն, Երևան 1984թ., 501 էջ
17. Սուխումլինսկի Վ. Ա. , <<Սիրտս նվիրում եմ երեխաներին>>, Երևան, 1979, 170 էջ

**18.** Սուխումլինսկի Վ.Ա., Հայրենիքը մեր սրտում, 1987 թ., 20- 127 էջ

**19.** ՈՒշինսկի Կ. Դ ., Մանակավարժական ընտիր երկեր ,հ. 1, Երևան, 1958 թ., 612- 620 էջ

**Էլեքտրոնային գրականություն**

**1.** file:///G:/baroyagit%201996-2(153).pdf[Խաչատրյան. Զ.Հ ]

**2.** http://kantegh.asj-oa.am/1726/1/238-246.pdf[Արզումանյան Ա.]

ՀԱՎԵԼՎԱԾ 1

## ՀԱՐՑԱԹԵՐԹ

Սույնհարցմաննպատակնէբացահայտելկրտսերդպրոցականիբարոյականդաստիարակ ությանուղիներնուձևերըարդիպայմաններում:

1. Համարումեքարդյոքկարևորբարոյականդաստիարակությանհետկապվածաշխատան քներըկրտսերդպրոցում:

   ա) այո □

   բ) մասամբկարևորեն□

   գ) կարևոր չեն□

**2.** Ըստ ձեզ որոնք են երեխայի (աշակերտի) բարոյական դաստիարակության խնդիրները, նշեք դրանք:

______________________________________________________________________________

______________________________________________________________________________

____________________________________________________________

**3.** Որոնք են բարոյական դաստիրակության խնդիրների լուծման ուղիներն ու ձևերը: Նշեք առնվազն երեքը:

1.______________________________________________________________

2.______________________________________________________________

3.______________________________________________________________

**4.**Կան արդյոք կրտսեր դպրոցում պայմաններ բարոյական դաստիարակության խնդիրների լուծման համար:

ա)կան□

բ)դրանք բավարար չեն□

գ)չկան պայմաններ□

ՀԱՎԵԼՎԱԾ 2

**5.**Որոնք են այդ պայմանները:

______________________________________________________________________________

______________________________________________________________________________

**6.** ՈՒ՞մ դերակատարությունն եք կարևորում աշակերտի բարոյական դաստրարակության ձևավորման գործում:

ա) ուսուցիչ□

բ ) ծնողներ□

գ) միջավայր□

դ) դասվարներ□

*ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ*

# ԴԱՍԱԼՍՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ամսաթիվ- 04.10.2021թ
Դասարան-IIԱ
Դասը վարող ուսուցիչ – Վարոսյան Սուսաննա
Դասալսող ուսուցիչ- Մովսիսյան Սուսաննա
Առարկա- Մաթեմատիկա
Դասի թեման- «Երկնիշ թվից միանիշ թվի հանում առանց կարգային անցման»

Դասալսման նպատակը.

Դասի կահավորումը
Թվերի, կարգերի աղյուսակ, շարժական թվեր, կպչուն թղթեր, խնդրի բաղադրիչների աղյուսակ:
**Դասի համառոտ բնութագիրը.**
Խթանման փուլում կատարվեց բանավոր հաշիվ, թվերի համեմատում, հարց ու պատասխան: Կիրառվեց «Թիրախ թվի» մեթոդը:
Իմաստի ընկալման փուլում նկարների օգնությամբ կատարվեց երկնիշ թվից միանիշ թվի հանում առանց կարգային անցման: Նմանատիպ գործողություն կատարեցին նաև աղյուսակի օգնությամբ: Մեկնաբանվեցին Վ. 128-ը: Դիտարկեցին հանման այն դեպքը, երբ երկնիշ թվի կամ նվազելիի առաջին կարգի միավորը մեծ է միանիշ թվից: Յուրաքանչյուր նկարին համապատասխան կազմեցին հավասարություն և հաշվեցին արտահայտության արժեքը: Լուծվեց խնդիր 132ա օգտվելով խնդրի բաղադրիչների աղյուսակից և շարժական թվերից: Խնդրի բովանդակությունը պարզաբանվեց գրատախտակի վրա: Աշակերտները գիտեին խնդրի բաղադրիչները և ակտիվ մասնակցեցին վերլուծությանը և լուծմանը:
Խնդիրները օգնում են ավելի արագ ու հստակ հասկանալու նոր գործողությունների բովանդակությունը: Տրվեց տնային հանձնարարություն, որը մատչելի էր նրանց լրիվ ինքնուրույն կատարելու համար: Գնահատվեցին և խրախուսվեցին առանձին աշակերտներ: Կատարվեց անդրադարձ (ի՞նչ սովորեցինք այսօր և ի՞նչը շատ կարևորեցինք):

Եզրակացություն.

Զարգացած էր երեխաների մաթեմատիկական պատկերացումները և հաշվողական հմտությունները: Գիտելիքները հիմնված էին ոչ թե հիշողության , այլ՝ մտածողության

վրա: Կարողությունների, հմտությունների ձևավորման հիմնական պայմանը` ուսուցչի բացատրությունն է, ապացույցը` հիմնավորումները:
Դասը հագեցած էր դիդակտիկ նյութերով, որը օգնեց տեսական նյութի ներմուծմանը:
Նոր մոտեցումներով անցկացված դասը, ուսուցչի ստեղծագործական միտքը հնարավորություն տվեց նոր դասը յուրացնել դիպուկ և հետաքրքիր օրինակներով և ծավալվելու: Հատկացված ժամանակը օգտագործվեց արդյունավետ: Հստակ ձևակերպվեց դասի նպատակը:
Մեր օրերում մաթեմատիկան և նրա մեթոդները խիստ անհրաժեշտ են ամենքին: Եվ այդ մեթոդների ճիշտ օգտագործումը կնպաստի երեխաների մաթեմատիկական մակարդակի բարձրացմանը: Դասվարը տիրապետում էր առարկային, մեթոդիկային և ստեղծագործական մոտեցում ցուցաբերեց, որի շնորհիվ զարգացած էր երեխաների մաթեմատիկական պատկերացումները և կարողությունները:

Դասալսող`          Ս. Մովսիսյան
Դասը վարող`        Ս. Վարոսյան